ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ
ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի 2021 թվականի բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ն:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի ու գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- Իրականացնել կրթության, մշակույթի ու սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման և այլ աշխատանքներ:
- Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման և ճանապարհային տնտեսության, նախադպրոցական և արտադպրոցականկրթության բնագավառներում:
- Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքը:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:
- և այլն:

Համայնքի 2021 թվականի զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ և բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինչպես նաև քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Համայնքի 2021 թվականի բյուջեի կազմման գործընթացում, հիմք ընդունելով նաև ՀՀ կառավարության 2021թ-ի պետական բյուջետային ուղերձում ամրագրված ուղղությունները, ներդրվել են գենդերային զգայուն բյուջետավորման մոտեցումներ ու տարրեր, որի համաձայն ՏԻՄ-երի գործունեության տարբեր ոլորտների (բաժինների) բյուջետային ծրագրերը, դրանց նպատակները, միջոցառումների նկարագրությունները և արդյունքային ցուցանիշները հիմնվում են նաև համայնքի գենդերային քաղաքականության ռազմավարության նպատակների, գերակայությունների, միջոցառումների և արդյունքների վրա:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանու անդամներին, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2021 թվականի բյուջեի միջոցների գոյացմանը, դրանց նպատակային օգտագործմանը, բյուջեի արդյունավետ կատարմանը և վերահսկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ